Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 օգոստոսի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նազարյանը, Ն. Ավետյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Թալինի 1 պոմպակայանի (Արագածավան բնակավայր) վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի օգոստոսի 12-ին, ժամը 16:00-ին:

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«ՄԻԿԱՆ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գործարանային նրբ. 21 093 767773	mikkar89@mail.ru
«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ	Նորք Մարաշ, Ա.Արմենակյան 125/3 096 939111	info@shushi-tech.com
«Ռիջիդ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25 տ. 093 355787	rigidalgroup@gmail.com

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 4 094 450 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - Թալինի 1 պոմպակայանի (Արագածավան բնակավայր) վերականգնման աշխատանքների				
1	«ՄԻԿԱՆ» ՍՊԸ	1 900 000	0	1 900 000
2	«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ	1 990 000	0	1 990 000
3	«Ռիջիդ» ՍՊԸ	3 500 000	0	3 500 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«Ռիջիդ» ՍՊԸ-ի** հայտով չեն ներկայացվել հրավերի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված՝ մասնակցի նմանատիպ փորձառության պայմանագրերը: Հավելված 3-ով ներկայացված ներգրավված մասնագետ Սլավիկ Խաչիկյանի նույնականացման քարտի վավերականությունը ժամկետանց է:

Մասնակից **«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի** հայտով ներկայացված չէ լիցենզիան՝ բնօրինակից սկանավորված: Հայտով ներկայացված նախկինում կատարված պայմանագրի կատարման ժամկետը և նմանատիպության ոլորտը չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ (Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Նմանատիպ են համարվում հիդրոտեխնիկական կառուցվածքների կառուցման, կամ ամբողջական կամ մասնակի վերակառուցման, կամ ամբողջական կամ մասնակի ուժեղացման, կամ ամբողջական կամ մասնակի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ մատուցված ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում:)

Մասնակից **«ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ի** հայտով չի ներկայացվել «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով պահանջվող էներգետիկայի մասնագետը:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«Ռիջիդ» ՍՊԸ-ին, «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամին և «ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ի**՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը (**27.08.2024թ. ներառյալ**) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բադալյան
անդամներ	_____	Ս. Նազարյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան